



## ՄԱՆԿԱՎԵՐԺԱԿԱՆ – ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱԿԱՆ Ե ՄԵՌԱՄ

• 8

ՄԱՅՐԵՐԻՆ և ԶԱՒԱԿՆԵՐԻՆ:

— 6 —

Շատ տարի առաջ ամերիկացի D-ր Martin-ը նկարագրելով շինացիների արևմտեան քաղաքակալիթութեան մօտենալու ձգումը, ի թիւս այլոց այս խօսքերն է ասել. «Հենասահանի մանուկները շատ դանդաղ են զարգանում մարմնապէս և հողեպէս. առաջինն այն պատճառով, որ նոքա երկար ժամանակ մնում են պինդ բարուրուած, խանձարուրի մէջ փաթթօւած, իսկ երկրորդն այն պատճառով, որ մայրերն ու զայեակները չեն կարողանում իրանց փորբերին հերիաժներ պատմել եւ երգեր երգել»: Միայն գործնական ամերիկացին գիտէ, ինչպէս գերմանական առածն առում է, մեխին՝ հենց մէջ տեղը տալ պատճառների պատճառի տուաը բռնել:

Փռքը ինչ ուշի ուշով խորհեցէք, թէ  
ինչ է նշանակում այս խօսքը՝ «մանուկները  
հոգեպէս զանգաղ են զարգանում» որովհետեւ  
մայրերը չգիտեն հեքիաթ պատմել, երդ եր-  
զեր, և ապա մտէք մեր աները . . . : Ուր է  
մեր առաջուայ պառաւ կանանց հոգեզուարձ  
լեզուն և կենդանաբար ձայնը, ուր է մեր  
մանկանց անբռնազբօս զուարթութիւնը, ո-  
րոնց ամեն մի ձիմալու մէջ նոր բանականու-  
թիւն էր լուսանում: Թերեւս զաւառներում  
տակաւին մի հետք մնացած լինի: բայց մեր  
մէծ քաղաքները՝ Թիֆլիզը, Բագուն կատա-  
րեալ ամայութիւն են ներկայացնում:

ԽԵՂԾ մայրեր .... Անգթութիւն կը լինի,  
եթէ վիրաւորենք ձեր ահսպառ մայրական  
սերը գեղի ձեր սիրեցեաները: Ե՞նչ հակառակն,  
մենք առաւելացիս խօսում ենք այն բազմու-  
թիւ մայրերի մասին, որնք իրանց քսանու-  
չորս ժամփց բալոր ժամկերը նուիրում են ի-  
րանց հոգու հատորին, չդակսեցնելով և ոչ 24

բարեւ, որոնք իրանց զաւակի արթուն ժամանակին նորա հետ կէլում են անձանձից անդադար, ամէն հնարաւոր լեզուներով, իսկ նորա քնած ժամանակ՝ օրօրում ու երգում են ամէն եղանակներով՝ լսած, զիտեցած, ինքնաշնար մեղեղիներով:—Բայց ինչ է այսքան խօսածի և երգածի նիւթը: այն ժողովրդական բանաստեղծութիւնն չէ, որովհետեւ նորա գոյն զրականական լեզուն՝ մեր կրթուած հոսարտիւթիւնից ժողովրդական բանաստեղծութիւնն էր վանակել է, որպէս անպատճաճ գուեհի կրթիւն: և ոչ ել զեղարուեստական բանաստեղծութիւնն է, որովհետեւ չունինք (ի մի հաւաքած ցիր ու ցան եղածները): Իսկ մանուկը մի մանում է կամաց կամաց, նա ոչ թէ մի օր, ոչ թէ մի շաբաթ, ոյլ ամիսներ և տարիներ մայրական գուրգուրանքների է, կարու նւ ահա մայրը իւր բոլոր հնարագիտութիւններով ու հանձարով պէտք է ճիզ թափէ ու ստեղծէ ծափ, ծղրիսի, կենդանների, ճիւտական, երեխի մեծի, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ռուսերէն ձայները կապով—անկապ մի և նոյն է: Քանի որ այսպիսի ձայները ինքը մանուկն է, կրինում այս ամենը անշուշտ ախործելի է լսել որովհետեւ յայտնի է, թէ մանկական քաղցր թոթովանքը մէջ որպիսի երաժշտական ձայներ կան, բայց երբ որ նոյն թոթովախօսութիւնը երկրորդում է իւր կոսկի կոկորդով և խրթնաձայն հնչիւններով հայրը ծառան, հիւրը, ամենայն ըլջապատող, երեակայեցէք, թէ ինչ վայրենի խառնաձայն է ձեանում մանուկի մընոլորտի մէջ: թէ ինչ անտանելի երամըշտութեան է մատնուում նորա քնքոյշ լսողութիւնը: Դերմանական պրոֆեսորը գետինն է, մանում երբ որ մի կէս ժամ լսում է ու սանսղների սարգած կատուերզը: Հոչակուած Կատզենբուսիկ-ը, իսկ այս տեղ մանուկը շարունակ պիտի վարժուի միայն այգպիսի ձայների: Բայց որովհետեւ մանուկի ակնանջը պրոֆեսորի ակնանջի շափ նրածաշակ չէ, նորան զոհացնում է ամենայն ձայն անփափի ուսափի և անդադար ժապաւերզը: Հոչակուած

նկատել, նա ընդհակառակն իւր շնարագիտութիւնների վերաց աւելացնում է նորերը և ողեսպառ է լինում իւր սակեզագործութիւններով՝ որպէս զի զաւակի ականջի դուռանական նիւթը չպակասի: Այսպիսի ահազին հոգեկան գործունելութեան պահանջի գէմ շատ անգամ նա զգում է իւր անզօրութիւնը և երբեմն այնպէս անօգնական է զտնուում որ իւր կեանքի կեսը կը տար, եթէ լորիմու կանաց պէս կարողանար լիզու դառնալ և իւր զաւակի 5՝ իսկ ապա 10 մատերը այսպէս զոլիլ:

Բուք կու գայ, բուք կու գայ,  
Բուքի տակէն մուկ կու գայ,  
Նէք նայեցէք ով կու գայ.—  
Խաչուկ աղան տուն կու գայ,  
Ծոցէն վարդի հոտ կու գայ,

Պղտիկ պղտիկ տունիկը,  
Աւլից պղտիկ կնիկը,  
Էլաւ պղտիկ էրիկը,  
Առաւ պղտիկ ըստիկը,  
Խնաց պղտիկ բաղարը,  
Բերից պղտիկ հացիկը,  
Տուից պղտիկ կնկանը,  
Դրից պղտիկ դօլապը,  
Կերաւ պղտիկ մուկիկը,  
Աւ չմնաց հացիկը:

Իսկ թէ երբեմն մայրն ինչպէս անձար է լինում բայց և լուել չի կարողանում տպացոյցն այն է, որ եթէ յանկարծ մի կատուներս մանէ, հանգամանքից օգուտ քաղելով անմիջապէս այսպիսի երդ կը կատէ.

Փիսիկ, փիսիկ, փիսիկ, փի..իս  
Փիսիկ, փիսիկ, փիսիկ, փի..իս  
Հափսաւ, փիսու, փիսիկ, փի..իս  
Աորչի փիսօն, գող կատուուն.

Ահա այս օրինակից հասկացէք, թէ մայրը իրօք պատճառ ունի լորիմու կանաց նախանձելու, և թէ այսպիսի դէպքերում տըգէտ ժողովուրդն աւելի յարմարութիւններով է օժառած, քան կրթեալ բարձր դասը:

Եւ մեր կանացք զբացել են այս պակասութիւնը, նոքա զանազան միջոններ են գործ զրել այսպիսի անել զրութիւնից գուրս դալու համար: Յայտնի է, որ այսպիսի աղնիւ ձգոմարմ ուժանք թարգմանել տուին ոռուսին և դեր-

մաներէն մանկական երգեր, որ և բերներերան անցնելով, մուտք գտան ամենայն տան մէջ: Յայտնի է, որ Պատկանեանի Աղյեանի մայրենի լեզուից երգերը ինչպէս ամենուրեք տարածուեցան: Յայտնի է, որ մի ժամանակ նորասիրութիւն էր գարձել աներում հրաւիրել կրթուած վարժուհիներ: Բայց թէ այս միջոցները որքան անբաւարար հանգիստացան և թէ տակաւին շատրան կայ անելու, սկըսնք վերջին հանգամանքից քննութիւնից: Քիչ չէք զանի բարձր զարգացած ծնողներ, որոնք մեծ նշանակութիւն տալով ժողովրդական տարրին, իրանց զաւակի համար նախ և առաջ հրաւիրում են սղուաւ հայքիստոնեայ աղախին: Սա ինչ որ տաննդութեամբ սովորել է և զիտէ, այն էլ զրուցում է երեխաներին: Բայց ծնողները շուտապ նկատում են, որ աղախինն այնու տմենայնիւ մի տգէտ արարած է, իւր պատմութիւնների և հեքիաթների մէջ լիքն են նախապաշարումներ, անհամ խրատներ, կասկածելի բարոյականութիւն, սատանաների գործեր: Ուստի ծնողները սորտն շեռացնում են և փոխարէնը բերում են մի կրթուած վարժուհի: Հիմա այսպիսի նոր կարգով մնուած Յ տարեկան երեխան, իւր չնորհքի երեխայրիքը ցոյց տալու համար, գալիս է և ծնողների առաջ արտասանում է զատարի կարասի ձայներ.

Արի գնանք Շաւարշան,

Որ տեղ ընկաւ քաջ Վարդան, —

և խեղձ ծնողները շուտարած իրար երեսի են նայում, կարծէս թէ տաել ու զենալով: Եկի Աստուած բարի տայ էն պառաւ կնկան: Նորա խօսքերի մէջ գոնէ բնական զբացմունք կար, Տշմարտութիւն կար, հոգի և կենդանութիւն կար»:

Իսկ թէ թարգմանած մանկական երգերը և մեր բանաստեղծների ինքնազիրները միշտ ողիղ հանգն ու մանգը չեն գտնում: Թէ նոքա շատ անգամ մանկական և բանաստեղծական աղից զուրկ են լինում, համեմատութեան համար վեր առնենք մի ժողովրդական բանաստեղծութիւն և իւր վարիանոր (այլ ընթերցուածք), որպէս զի տեսնենք: Թէ ինչպէս երկու քոյլ հեռաւողութեամբ երգող

կանոյք՝ մի մի ինքնուրոյն երգասաց աշուղ են դառնում, մինչդեռ մեր բանասակազմերը այդ չափով ողելորուել չեն կարողանում.

Խ ը ի մ'.

Նոր—Նախ.

Ֆի՛ ս մի՛ համ ժիւ,  
Համը էլու երթիւը,  
Դերու մեզը ու կորագը,  
Դանակ գանակ կանչեցին,  
Առանց գանակ մորթեցին,  
Գառակ գանակ մորթեցին,  
Քը արաւ պապին երթիւը:

Համի ժրու ժրու ժրու,  
Համը էլու բամի վերայ.  
Միկ կուզ մը ձաւու կորայ,  
Չորթեցաւ վար քնիսաւ,  
Դանակ գանակ կանչեցին,  
Գառակ գանակ մորթեցին,  
Ջուտուր վրան ծամշեցին,  
Քը արաւ պապին երթիւը:

«Ուսեալ վարժուհին» այս խաղը յիմարութիւն կանուանէ և սորանից աւելի կը գերադասէ. «Արի գնանք Շաւարշանութիւն» Արդարի այս տեղ խելօք տրամաբանութիւն» չկայ, բայց և այնպէս ամենայն կարդացող կատէ, թէ մէջը մի ինչ որ զրաւիչ լան կայ ... կենդանի շարժումն զգացում խնդութիւն կայ, մի ինքնագիւտ բանասակազմութիւն կայ, որ գժուալի է «տրամաբանորէն» ըմբռնիւ: Սակայն երեւակացեք, որ սա մի խաղ է ներկայացնում: Ճորս, վեց կամ ութ ձեռքերից իւրաքանչիւրը հինգ մատով պինդ բռնել է միւս ձեռքի երեսի կաշին, և այդպէս կազմուել է մի երկար կախան. «Ճիւ, ճիւ» ասելու հետի միամին այդ կախանը վեր ու վայր է շարժուում, հետզետէ աւելի արագութեամբ, հէնց որ հաւը սկսում է «պապին» մեզը ու կարաղը ուտել (կամ հաւող ուտել և հարբել), իսկոյն ամեն կողմից ոգանակ, գանակ, են կանչում, բայց դանակի գալուն սպասել չկարողանալով՝ անդանակ են մորթում փայտի գանակով են քերթում. և այս երկիւղից ապա ամենքը ժթքու են անում; կախուած ձեռքերը իրար թեղնելով՝ թաշում ցրուում են ամեն կողմը—Միթէ ձեր զգացումը չի ասում թէ այս ստանաւորի մէջ երկու մաս կայ. մինը խաղացող երեխայոց համար միւսը՝ խաղացընող մօր համար: Երեխայոց մասն է ականջին զարնող և խտղող ձայներ. «Ճիւ, ճիւ,—հաւ, հաւ,—դանակ, դանակ,—կանչեցին» մօրթեցին, քերթեցին,—Ժթքու: Խսկ մօր մասն է աշխուժացնող, խաղին հոգի և կենդանութիւն տալու հրախող յորդուակը որ շապով ոգանակ գանակ, և կանչում շապով մօրթում

է, շապով «քերթում» է, և ամենպին մթրուանել է տալիս:

Նոյն խորհրդով հետեւեալ ստանաւորը երեխայի ականջին թմրկահարում է տըլմրլ—տըլմրելներով, և Խենասուող նիկոսաւ տերՊօղոս, Քոռ-Փանաս և Ջլմրլ Թողոս շառաշխւն հանող ծիծաղաշարժ անուններով. իսկ մօր աշխոյժը և խոնդութիւնը բորբոքելու համար՝ նկարագրում է հարսանիքի մանրումանութիւնները: Խաղն էլ այն է, որ մայրը երեխային զեր ու վեր թացնէ:

— Ասօր ձեզի ով եկաւ,  
— Տըլմրլիկին պապուիկը,  
Տըլմրլ տըլմզը չալեցին,  
Տըլմզը իկին խաղցուցին.  
Հացն ու զինին, պաստուրման,  
Հաւի միսն ալ հազիր կան,  
Հարսի անունը Խենասող,  
Փեսին անունը Նիկողոս.  
Առին տարին սուրբ Ամենողոս,  
Պատկողն էր տէր-Պօղոս,  
Կնքահարն էր Քոռ-Փանոս,  
Տաւուլցին էր Ջլմրլ-Թողոս,  
Տըլմզը տըլմզը չալեցին,  
Տըլմզը իկին խաղցուցին,  
Վերջը մէյնակ ճամրեցին:

Հիմա այդ ժողովրդական բանասակազմութեան գէմ՝ կարգացէք հետեւեալ «խելօք» և բարեվայելուչ արուեստուկան կանգունաչափ ստանաւորը և տեսէք, թէ արքիօք կը գտնի՞ք մէջը այն զուգընմժաց բաժինները, որով մօր և երեխայի զուարիթութիւնը իրար փօխադարձար աւելի աշխուժացնող լինեին: Ահա մի ամբողջ վենդանական թալաւորութիւն, բայց որ տեղ մի հաւի ճիւի չափ թըռը կամ կենդանութիւն և շարժում չկայ, իսկ արձնի ծանրութեամբ խրատ՝ որչափ ուղենաս.

Երբ որ ձագեցաւ պայծառ արեգակ,  
Այսաւ, պատեի, հաւ ու ծիծութակ,  
Զիւ սիսաւ, գտնուի, այծ ուր հոր ու կով  
Գնացին իրանց գործին շտապով,  
Միայն ծոյլ տղան չի գնաց գովոց,  
Կիրքը շպոտեց ու փախառ փողոց,  
Իրիկուն ամենքն յետ դարձան ուրախ,  
Միայն տղան էր տրտում, զլախախաւ:

Կամ նայեցէք հետեւեալ բարեկիրթ» շար-

ճռեմներին և խմացէք, թէ ի՞նչ սառնութիւն  
պէտք է շնչէ խաղաղու եռանդի վերայ.

— Այ խոս հարող ասա տեսնենք,  
Փու ի՞նչպէս ես խոս հարում.  
— Այսպէս աչա, լաւ նայեցէք!  
Ես այսպէս եմ խոս հարում.

Ուշագրութիւն դարձրէք, թէ ի՞նչպէս  
ժողովրդական բանաստեղծութիւնը միշտ կը տրախան,  
յատուկ բառեր և խօսքեր է ընտրում իմաստներ արտացայտելու համար, խկ արուեստականը վանկերն ու ոտքը լրացնելու համար, ճանապարհին իմաստի կէսը կորցնում է և մնացածը շաղ է տալիս.

ԺՌՈՂՈՎ. Բ.

Առանց մազի կը մազուիմ,  
Հոզին հները կը չաղուիմ,  
Դեանին տակը կը թաղուիմ,  
Մասին բառնին կու տամ աճ,  
Ան հոզը կը ներկեմ կանաչ.

Խսկ ընդհակառակ, ինչպէս հիանալի է,  
երբ որ արուեստական բանաստեղծութիւնը  
իմաստութեամբ օգտուում է ժողովրդական՝  
ով զիտէ որ բեկորներից.

ԺՌՈՂՈՎ. Բ.

Արեգակ, արեգակ, զուրս արի,  
Հերի ու մերդ եկել են,  
Առէկ բլիթ բլրել են,  
Պատի ժակը կոփել են,  
Մաշն եկել է, տարել է,  
Կատուն եռնեն վազել է,  
Գամի սոր կոփել է,  
Ազատանը վիթել է,

ԱՅԼ ԸՆՂԹԵՐԾՄԱՏ.

Արեւ. արեւ, զուրս արի,  
Հերն ու մերդ եկել ու,  
Թուր ու .թուանք բերել ու,  
Պատու տակին թարել ու

ԱՐՄԵՆԱՄ. Բ.

Անձրեւ անձրեւ, ցած արի,  
Բաւցուը ցորեն ու գարի,  
Բաւցուը ծաղիկ, կանաչ խօս,  
Աւէկ փոչի, մաքրէ ոգ:

ԱՐՄԵՆԱՄ. Բ.

Արեւ. արեւ, արի զուրս,  
Քեզի բերենք աչքի ուսու,  
Քու քուրիկ, լուսնիկան,  
Բերեց շամելչ մէկ աման,  
Ամշը էկուս մութ արու,  
Չամելչը աչքէն կորաւ,  
Բնց երեսու, արեգակ,  
Աման շամելչ քեզ կու տանք ...  
Օ՞ր, արեւին խորեցինք,  
Ամշը տակէն հանեցինք:

Քիչ վեր զեանք և աւելի բարձր հասակի  
իմաստական բանաստեղծութեամբ զառնանք. այնանդ էլ  
ժողովրդական բանաստեղծութիւնը սիրում  
է կրկնակի ընթացք տալ ամբողջ հատածին,  
բայց այնպէս որ զատ զատ կարծուած իմաստ-  
ները՝ ներքին առընչութեամբ զեղարուեատո-  
ւէն իրար չետ կազում է, որի լաւ օրինակ

է ջան զիւլումը. Առաջին երկու տաղե-  
րում կարծես թէ ջան զիւլումը մի ան-  
տարբեր բանի վերայ է խօսում.

|   |  |
|---|--|
| Դեռ ու զնում լոփ տալով,<br>Զույսու խնձորը ծափ տալով ... | Քարի տակին վար կանեմ.<br>Ան ակուանին քար կանեմ ... |
|   | Եմ աղպերը սորին ա ...<br>Շուին թեցի կորին ա ...    |

Եւ այսպէս մեզ «սար ու ձոր» մանածե-  
լուց յետոյ՝ յանկարծ խօսքին անակնունելի  
վերջաւորութիւն է տալիս.

|   |  |
|---|--|
| Գետ ու գնում լոփ տալով,<br>Զույսու խնձորը ծափ տալով ... | Քարի տակին վար կանեմ.<br>Ան ակուանին քար կանեմ ... |
| Ա չրէս նեկ իմ աղպէր,<br>Ամ սկածը ինձ տուէք, —           | Եմ սկածը ինձ տուէք, —                              |
| Աւ գտակը թափ տալով,                                     | Գյութիւն թարդ կանեմ.                               |

|   |  |
|---|--|
| Եմ աղպերը սորին ա ...<br>Շուին թեցի կորին ա ... | Աղպէր, աղպէր շուին ա ...<br>Եղանձու աղպէր, շուին աղպէր ...     |
|   | Եղանձու աղպէր, շուին աղպէր ...<br>Քու քիրը Եղանձու սորին ա ... |

Այս տների գէմ մենք արուեստական  
բանաստեղծութեան օրինակներ չենք բերի.  
միայն կը հարցնենք, թէ մեր մեծահատոր վէ-  
պերից քանիսը կարող են՝ իրանց բազմաթիւ  
էջերով՝ այնքան ոյժ և զօրութիւն արտայա-  
տել, ինչ որ չետեւեալ չորստողանի տունը իւր  
մէջ ամիսփում է, ուր ձեր առաջ կննդանի  
նկարապետում է մի նոր նշանակալարա.

|  |  |
|--|--|
| Կարաւը կաղնեց քարին,<br>Կտուցը լիքը արին.        | Կարաւը կաղնեց քարին,<br>Կտուցը լիքը արին.        |
| Մէկ գաստա վարդ եմ քաղել՝<br>Տարէք իմ թաղա եարին. | Մէկ գաստա վարդ եմ քաղել՝<br>Տարէք իմ թաղա եարին. |

Այժմ դառնանք մեր առաջուայ խնդ-  
րին: Եթէ մեր նորագոյն զրականութիւնը,  
այսպէս աննկատելի կերպավ՝ մեր ընտանիքի  
զործածութիւնից զուրս հանեց հարազատ,  
քայլցր, ուրախ, բաղմազեղուն և ջղապինդ բա-  
նաստեղծութիւնը, — միթէ տեղն էլ ոչինչ  
չպէտք է գնէ: Զմոռանանք D-r Martin-ի խօս-  
քերը չինացիների յետագիմանթեան մասին:

|  |                                 |
|--|---------------------------------|
| Մեր մայրերը և զաւակները ծարաւի են մնա-<br>ցել, միթէ նոցա պապակը չպէտք է կարուի:<br>Եւ որ արբուսէ, միրում ի փոքրիանց յայո-<br>ցանէ, բաժակ մի ջուր ցուրտ, ամէն տաեմ<br>ձեզ, ոչ կորուսէ զվարձա իւր: | Մօսք չկայ, որ անցեալին դառնալ և |
|--|---------------------------------|

կրկն պառաւներին հրաւիրել՝ ել չենք կարող. ներկան անմիսիթար է, պէտք է մտածել վաղուան համար: Մէր մայրերը և զաւակները մեր գարուն զբականութեան դոշում են.

Իիւլիւլն էկաւ՝ վարդ չունի  
Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.  
Էլ ով որ գարդ չունի —  
Ուր ես գալի, այ գարուն:

Աշա մեր առաջարկութիւնը: Պէտք է մեր մայրերի համար զիլը ստեղծել: Այս և այն տեղ ցիր ու ցան եղած ժողովրդական և արուեստական բանաստեղծութիւնից պէտք է պատմելու և երգելու նիւթեր ժողովի՝ մանկանց զանազան հասակին յարմարաւոր գասաւորութեամբ: Ընարութիւնը շատ զգուշաւոր պիտի լինի. սկզբունք պէտք է զրուի հարազատ բանաստեղծութիւնը, իսկ «վայելականութիւնը» նեղ մաքով չպէտք է հասկանալ: Պէտք է առաջնորդուիլ ազգային և հոգեբանական ծմարտութեամբ: Խմբագրութիւնը կարող ձեռքի պէտք է յանձնուի: Տպագրութեան ճոխութեանը ոչինչ չպէտք է խնայել լաւ պատկերներով զարդարած լինի, հայկական եղանակների խազեր ու նենայ (բայց ոչ այնպէս տպէտ ձեռքով կազմած, ինչպէս որ Դամառ • Քաթիպայի մանկան ոտանաւորների խազերն էին): Խոկ մեր բանաստեղծները թող փաքր ծառայութիւն չհամարեն, եթէ ուղենան այս ճիւղի զրականութիւնը ճոխացնել, ինչպէս որ պ. Յ. Յովհաննիսեանը զարմանալի յաջողութեամբ փորձեց: «Արարատ»-ի անցեալ համարում «Նոր գարուն»-ը տպագրելով, որի մէկ տունը վերև առաջ բերինք (Բիւլիւլն էկաւ ...):

Հրաւիրում ենք մեր հրաւարակիների, մարդասէր ազգայինների և մանաւանդ յառաջադիմութիւն սիրող կանանց ուշադրութիւնն այս լուրջ ինդքի վերայ, յիշեցնելով թէ «Եւ որ արբուսցէ միում ի փոքրիկանց» յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ: ամէն առաջ ձեզ, ոչ կորուսցէ զվարձո իւր:

սիրութեամբ՝ յանձնեց մեզ հետեւալ զեղծ կական բանաստեղծութիւնը որ նա տեղն ու տեղը զրի է առել, նոյն իսկ բանաստեղծութիւնից հայ աշուղ կնոջից լսելով՝ որ և մանք յարմար գատեցինք, որպէս յաւելուած, այս տեղ առաջ բերել:

Ոտանաւորի բովանդակութիւնը հասկանալու համար, բաւ ական համարուի հետեւալ ծանօթութիւնը: Մարդարա զիւղի մօտ Երասմի վերայ այժմ վերջացնում են մի փառաւոր կամուրջի շինութիւնը, ուր առաջ բանում կը լսատը (գեամի լորկա, զոմիկ, ձիազ, բայզադ): Սիմինդ—ցեմենտ, Սէֆիլ\*—երեկ տաճիկ գեամչու անունը զորդոշուն—արճիճ, Վրացիլ—Թիֆիլիսից եկած վարդետներ, բարից քիունուր—քարածուխ, Թեղինկա—ինքը բանաստեղծուհին:

Ճշմարիտ է դիւանը,

Հաստատաւ կարմնջի բանը,

Փափագին եկաւ իշխանը.

Գովամ նորաշէն կամունջը,

Երազին կազեցին կարմունջը,

Թափեցին քրտինք ու արուն,

Տէրիցն է էս զարդ ու կանուն.

Գովամ նորաշէն կամուրջը,

Թիֆիլսու եկան ուստէքը,

Ուղիղ է էս աշխատանքը,

Բացոււաւ քասիրների հանքը.

Գովամ նորաշէն կամուրջը,

Զարխով են քաշում վարպետները,

Կանչում են սուրբ հայրապետները,

Կընդունին գաւառապետները.

Գովամ նորաշէն կամուրջը,

Փռու փարին սիմինդ լցին,

Գեամ ու լորկին գործից քցին,

Գոմիկի ճրագն անցրին.

Գովամ նորաշէն կամուրջը,

Կարմունջ շինին չուգունից,

Սէֆիլ գեամչուն քցին բանից,

Լորկին գուրս արին գիւանից,

Գովամ նորաշէն կամուրջը,

Կարմունջ փորմով դաշեցին,

Գոմիկի գուռը փակեցին,

Բայդաղը կտրից թերեցին.

Գովամ նորաշէն կամուրջը,

Կալիրեցին զուրդուշունով,

Կեցցէն վրացիք գուժինով,

\* Սէֆիլ՝ տաճկերէն նշանակում է խեղճ, անգանան:

Կընցնի գօրք շօշունով.

Գովամ նորաշէն կամուրջը:

Կարմունջը թամաշի նախշին,

Ճաղերը ռանդով քաշին,

Պատմութիւն երգով ասին.

Գովամ նորաշէն կամուրջը:

Կարմունջ գու աղա իշխանաւոր,

Կարմունջների մեծ թագաւոր,

Շատ մարդիկ փափագաւոր.

Գովամ նորաշէն կամուրջը:

Կարմունջ բարձր ճաղերով,

Թշիլինկէն գովաց խաղերով,

Թամաշա թափան գեղերով.

Գովամ նորաշէն կամուրջը:

Գահէք գիտեն չարն ու բարին,

Քարից քեօմուր վարին,

Կարմունջը շօշին յարմարին.

Գովամ նորաշէն կարմունջը:

Հունարով է ուստա Խաշան,

Զուխտ Անոն իրարու բաշին,

Կարմունջը զալամով քաշին.

Գովամ նորաշէն կարմունջը:

Գլուխ կը բերին նոր տարուն.

Կօծն գարնան բերը ու բարին:

Մուրազ է խեղջ զարիներուն.

Գովամ նորաշէն կարմունջը:

Թեղինկէն խղճում է երգով,

Յոյս ու միտք Աստուծոյ փառքով,

Գովանք հայոց վարքով.

Գովամ նորաշէն կարմունջը:

Այս ոտանաւորի մէջ պարզ նշմարուում  
է արուեստական բանաստեղծութեան եղծիչ  
աղքեցութիւնը: Յանգերը բուն ժողովրդա-  
կան մոխ կոչուած յանգեր չեն: այսինքն  
ամրող բառերի գեղեցիալանգութիւն չեն  
կազմում (ինչպէս որ ուրիշ օրինակում տե-  
սանք հետեւալ կերպով վարդ չունի, զարդ  
չունի, դարդ չունի), այլ աւելի հոլովական  
վերջին վանկով են կազմվում—ով, ով, ով (եր-  
գով, փառքով, վարքով): Բայց գարձեալ այն-  
քան ժողովրդական կերպարանք ունին, որ  
յանջը պահպանում են մի քանի վանկով և  
ոչ թէ միայն մէկ աղքատ վանկով, ինչպէս որ  
արուեստական բանաստեղծութեան սովորու-  
թիւն է (զոր օր, այն տեղ կարգում ենք:  
զիւանը... ջի բանը, իշխանը, կամ ի—ու—լ):

Այս ոտանաւորը չէ նմանապէս և ոչ

զեղարու եստական ստեղծողութիւն, ուր ոտա-  
նաւորի երկարութիւնը չի համապատասխա-  
նում իմաստի չնչինութեան և զուրկ է լա-  
ւագոյն ժողովրդական բանաստեղծութեան  
կարձ, հատու, պատկերաւոր գարձուածքնե-  
րից: Մէջը զգացմունքը մի անդամից չի ար-  
տայայտուում այլ կաոր կաոր, ուստի և  
կրկնութիւններով լիքն է:

Մի խօսքով գործը անտաղանդ և տղետ  
ինոջ գործ է: Սակայն հենց ուշագրութեան  
արժանի հանգամանքն այս է, թէ ինչպէտ  
չան—զիւլումների և հարբրաների աշխար-  
հում (Դոլը հզղիր, Մարգարա) երգերով  
մնուած տղետ և հասարակ կինը ազատ կա-  
րողանում է բնութեան աղքաւծ տղաւորու-  
թիւնները բանաստեղծօրէն արտայայտել. թէ  
ինչպէս ափսոսալով անցեալը (յաստը) և սքան-  
չանալով նորով (կամքջով) չի կարողանում  
ազատուիլ այսպիսի երկու ընդդիմակ զգա-  
ցումներից, որ և արտայայտում է խղճալով  
յոյս ու միտք Աստուծոյ փառքով և զովելով  
հայոց վարքով:

Այս առաջի մնացած խրատը՝ թողնում  
ենք ընթերցողի խորհրդածութեան:

Ս. Մ.



ԻՆՔՆԱԼԱՐԹՈՒԹԵԱՆ ԿՈՐԾՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ.

Մհեր իսկապէս աէք ենք միայն այն գի-  
տութեան, որ սեփական աշխատութեամբ  
ենք վաստակել, որովհետեւ միայն գրանք են  
մնայուն եւ կենդանի տպաւորութիւնները  
Ո. Սմայլս.

«Երկայում գոյութիւն ունեցող գպրոցներն  
իւրեանց լայն հանրագիտական ծրագրներով չեն կա-  
րողանում զարթեցնել սաների մէջ հոգւոյ գործնա-  
կան ոյժ. նրանք առաջ են բերում բազմաթիւ երի-  
տասարդ մարդիկ, որոնց վրայով գպրոցական իմաս-  
տութիւնն անցել է մըրիկի նման, թողնելով նոցա-  
մէջ միայն կործանման հետքեր: Այդ հանգամանքը  
առաջ է բերել մի նոր ձգտում: այն է՝ սահմանել  
կրթութեան բուն նպատակին հասնելու համար մի  
սիստեմ տարբեր պաշտօնական գպրոցում ը-  
գունուածից, այսինքն ինքնուրոյն աշխատութեան  
սիստեմ տանց ուրիշի միջամտութեան, առանց  
սոխուածն և վարձատրութեան,